Մինոգը՝ լսելով Նորին Սրբութեան մարտի 30-ի № 553 մակագրութիւնը, որոշեց. Համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի գանձապահին տալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին գաղթականների գումարից 20000 ռուբլի։ 1 ապրիլի, թ. 106։

Մինոգը՝ լսելով հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի կտակի բ. կէտը, որի համաձայն պիտի վճարուի հանգուցեալի կնոջը, Հռիփսիմէին կտակագումարի տոկոսներից իւրաքանչիւր տարի մինչև այրու մահը 2500 ռուբլի, որոշեց. Պատուիրել Մ. Աթոռի կալուածների կառավարիչ Լ. Տէր Աւետիքեանին շարունակել տալ հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի այրի Հռիփսիմէին, այժմ տիկին Առիւծեանին՝ տարեկան 2500 ռուբլի 1914 թ. մայիսի 30-ի № 977 հրամանի մէջ յիշուած կարգով։ 15 ապրիլի, թ. 136։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԵՐՈՒՄՆ

Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականն իւր 4 Մարտի ներկայ 1915 թ. 2202 համար գրութեամբ յայտնում է Վեհափառ Կաթուղիկոսին՝ որ Կովկասի Տ. Փոխարքայի միջնորդութեան համաձայն ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ բարեհաճել է Ամենաողորմածաբար նեղուն շնորհել Գանձակի նահանգի և գաւառի հայ լուսաւորչական քահանայ Տէր Օհաննէս Ոսկանեան Խոջայեանցին, և քաղաքացիական շիրաւունքներից զրկուած Տէր Գրիգոր Յովհաննիսեան Առաքելեանցին, Տիգրան Տէր Մովսիսեան Վարդապետեանցին որնև Տէր Մարգարեանց, Գրիգոր Յարութիւնեան Միրզաբէկեանցին, Սարգիս Յովհաննիսեան Մանուէլեանցին, Ոսկան Մակիչեան Բաղդիեանցին, որնև Բողդեանց, և Յարութիւն Համբարձումեան Աբրահամեանցին։